# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2025 թվականի N 74-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 65-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2025 թվականի հուլիսի 25-ի արտահերթ նիստի օրակարգը՝
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը հաստատելու մասին
3. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված քաղաքացիների համար բնակարաններ և բնակելի տներ կառուցելու համար «Ամարաս» համահայկական բարեգործական հասարակական կազմակերպությանը համայնքային սեփականություն հանդիսացող, Ծաղկահովիտ բնակավայրում գտնվող 02-053-0009-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքից 0,5 հա հողատարածք նվիրաբերելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԳՈՌ
ՂԱՋԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ
ՄՀԵՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2025 թվականի N 75-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածներ 1 -ի, 2-ի և 3-ի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԳՈՌ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՀԵՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ**

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2026 - 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
# ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հաստատված է Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի
ավագանու 2025 թվականի հուլիսի 25-ի N 75-Ն որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ
(անունը, հայրանունը, ազգանունը)

բնակավայր Ծաղկահովիտ
2025 թվական

# 2026 - 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծաղկահովիտ համայնքի 2026 - 2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման համար հիմք է հանդիսացել համայնքի 2023-2027 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը: Ծաղկահովիտ համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումից, պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայից, նպատակային հատկացումներից (սուբվենցիա) գոյացած եկամուտները հատկացվելու են համայնքի հնգամյա զարգացման ծրագրով սահմանված դրույթների իրականացմանը, ապահովելով օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների շրջանակում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքի բնակչության բարեկեցության բարձրացմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանը, սոցիալապես անապահով խավերի սոցիալական և կենցաղային պայմանների բարելավմանը, մշակութային և մարզական կյանքի աշխուժացմանը:

Համայնքի 2026 - 2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծում որպես հիմնական ուղղություններ առանձնացվել են՝

1) Տեղական ինքնակառավարման մարմնի և համայնքային կառույցների կողմից համայնքի բնակիչներին որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման աշխատանքները,

2) Բնակավայրերի մեծ մասում ունենք խմելու ջրի ցանցերի հիմնանորոգման խնդիրներ, որոնց լուծումը առաջնահերթորեն դրված է ծրագրում և իրականացվելու է սեփական եկամուտների, ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայից, նպատակային հատկացումներից (սուբվենցիա) գոյացած միջոցների հաշվին,

3) համայնքային միջոցների հաշվին բազմաբնակարան շենքերի տանիքների, մուտքերի ,բակերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների բարեկարգում, պուրակների կառուցում,

4) սեփական եկամուտների, ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայից, նպատակային հատկացումներից (սուբվենցիա) գոյացած միջոցների հաշվին կիրականացվեն բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման ու բարեկարգման աշխատանքներ

5) սեփական եկամուտների, ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայից, նպատակային հատկացումներից (սուբվենցիա) գոյացած միջոցների հաշվին կիրակպնացվեն մի քանի բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքներ

6) սեփական եկամուտների, ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայից, նպատակային հատկացումներից (սուբվենցիա) գոյացած միջոցների հաշվին կիրականացվեն մի քանի մանկապարտեզների վերակառուցման և գույքի ձեռք բերման աշխատանքներ

7) համայնքին պատկանող հողատարածքների նկատմամբ իրավունքի պետական գրանցման, քաղաքաշինական փաստաթղթերի կազմման, դրանցում փոփոխություններ կատարելու, առկա քաղաքաշինական խնդիրներին և մարտահրավերներին մասնագիտական լուծումներ տալու աշխատանքներ

8) համայնքային ենթակայության մանկապարտեզներ և արտադպրոցական դաստիարակության ծառայություններ մատուցող հաստատություններ հաճախող, սոցիալապես անապահով երեխաների վարձի մասնակի և ամբողջական փոխհատուցման, մանկապարտեզներին որոշակի գույքով ապահովման, ջեռուցման խնդրի կարգավորման, համայնքային ենթակայության արտադպրոցական կրթական կառույցների հիմնանորոգման ու կահավորման, մարզադպրոցների վերանորոգման և մարզական տարածքների բարեկարգման ծրագրերի իրականացման,

9) համայնքի վարչական տարածքում ճարտարապետական հուշարձանների վերանորոգման, ինչպես նաև նստարանների և զրուցարանների ավելացման,

10) առևտրի և սպասարկման ոլորտում գործունեության, օրենքին չհակասող լրացուցիչ կանոնների և պայմանների մշակման շնորհիվ, համայնքում բացօթյա առևտուրը քաղաքակիրթ և հարմարավետ դարձնելուն միտված աշխատանքների իրականացման,

11) համայնքի սոցիալապես անապահով խավերի ֆինանսական, կենցաղային պայմանների բարելավման, դրանցից օգտվելու հասանելիության և սոցիալական խնդիրների լուծման ուղղությունները:

# ՀԱՄԱՅՆՔԻ 2026 - 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Համայնքի 2026 – 2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծով եկամուտների կանխատեսումներն իրականացնելիս հաշվի է առնվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու իրավական հիմքերը, մոտ անցյալում համայնքային բյուջե փաստացի հավաքագրված եկամտային հոսքերը և առկա բազաների տվյալները: Վարչական բյուջեի սեփական եկամուտների կանխատեսումը ընդգրկում է հարկային եկամուտները (անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ), տեղական տուրքերը և ոչ հարկային եկամուտները (տեղական վճարներ):

**Փոխադրամիջոցների գույքահարկը** կանխատեսվում է 2026թ. համար՝ 45728,0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 46102,0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 46102,0 հազ. դրամ: 2026թ. համար փոխադրամիջոցների գույքահարկը կանխատեսելիս հիմք են հանդիսացել 2025թ. առկա բազաները, 2026-2028թթ. համար կանխատեսվել է 10% աճ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետություն մեքենաների ներկրման ծավալի աճը:

**Անշարժ գույքի հարկը** կանխատեսվում է 2026թ. համար՝ 41560,0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 41256,0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 40556,0 հազ. դրամ: 2026 թվականի անշարժ գույքի հարկը կանխատեսելիս հիմք են հանդիսացել 2025թ. դրությամբ առկա բազաները/այդ թվում ապառքները/, ինչպես նաև անշարժ գույքի հարկի դրույքաչափի 25 % աճը :

**Տեղական տուրքերը** կանխատեսվում է 2026թ. համար՝ 2500,0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 2500,0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 2500,0 հազ. դրամ:

**Պետական տուրքերը** 2026-2028թթ. համար կանխատեսվել են 2026թ 800,0 հազ դրամ, 2027թ. 800,0 հազ դրամ, 2028թ – 800,0 հազ. դրամ:

**Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարները** կանխատեսվում են կանխատեսվում է 2026թ. համար՝ 8510,0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 9470,0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 9470,0 հազ. դրամ: 2026-2028թթ. համար կանխատեսվող տվյալները ներկայացված են հաշվի առնելով նոր վարձակալության պայմանագրերի կնքման, որոշ պայմանագրերի դադարեցման, բազաների ճշգրտման գործընթացի շարունակականությունը:

**Այլ գույքի վարձակալությունից մուտքերը** կանխատեսվում է 2026թ. համար՝ 100,0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 100,0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 0,0 հազ. դրամ:

**Տեղական վճարները** կանխատեսվում է 2026թ. համար՝ 15900,0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 16000,0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 17100,0 հազ. դրամ:

**Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարները** կանխատեսվում է 2026թ. համար՝ 1500,0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 1500,0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 2000,0 հազ. դրամ:

**Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտները** կանխատեսվում են 2026թ. համար՝ 3200,0 հազ. դրամ, 2027թ. համար՝ 3000,0 հազ. դրամ, 2028թ. համար՝ 3000,0 հազ. դրամ:

# ՀԱՄԱՅՆՔԻ 2026- 2028ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Օրենքով սահմանված կարգով համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական և պատվիրակված լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի ծախսային մասը կազմելու համար հիմք է հանդիսացել 2023-2027 թվականների համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթները:

**Ծրագրի անվանումը՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01 խումբ 01 դաս 01 ծրագիր 51)

**Ծրագրի իրականացման նպատակն** է օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում համայնքի բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման համար համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, համայնքի վարչական տարածքում համայնքապատկան օբյեկտների հիմնանորոգում, նորերի կառուցում:

**Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է** Ծաղկահովիտի համայնքապետարանի աշխատակազմի համար ստեղծել պատշաճ աշխատանքային պայմաններ, օրենքով սահմանված լիազորությունների և պարտավորությունների լիարժեք իրականացման համար:

Կառավարման ապարատի պահպանման ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել նախորդ տարիների ընթացքում կատարված փաստացի ծախսերը, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրենց բաժինների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները: Աշխատավարձի ֆոնդում տարեկան կտրվածքով պլանավորվել է հավելյալ միջոցներ, որոնք կուղղվեն՝ պայմանագրային հիմունքով աշխատող գործակալների, փորձագետների և գործավարների աշխատավարձերի վճարմանը, ինչպես նաև աշխատավարձի գծով հնարավոր օրենսդրական փոփոխությունները իրականացնելու նպատակով :

**Ծրագրի անվանումը՝ «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 01 խումբ 03 դաս 03 ծրագիր 55)

**Ծրագրի իրականացման նպատակն** է Ծաղկահովիտ համայնքի սեփականություն համարվող հողամասերի և անշարժ գույքի չափագրման, գնահատման, դրանց նկատմամբ իրավունքի գրանցման հետ կապված աշխատանքները ՀՀ ԱԳՀԿՊԿ-ում:

**Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է** օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող պետական գրանցման ենթակա անշարժ գույքի հաշվառման և գրանցման հետ կապված գործընթացների ապահովում, համայնքի բնակչությանը քաղաքաշինության բնագավառում մատուցվող որակյալ ծառայությունների մատուցում:

**Ծրագրի անվանումը «Նավթամթերք և բնական գազ»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 04 խումբ 03 դաս 02 ծրագիր 55)

**Ծրագրի իրականացման նպատակն** է Ծաղկահովիտ համայնքի բնակավայրերում գազատարների կառուցման աշխատանքները, որով կլուծվի համայնքի բնակչության ջեռուցման հարցը:

**Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է** ունենալ գազաֆիկացման համակարգ: Նախատեսված միջոցների հաշվին կկառուցվեն գազատար խողովակներ:

**Ծրագրի անվանումը՝ «Համայնքային զարգացում»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06 խումբ 02 դաս 01 ծրագիր 55)

**Ծրագրի իրականացման նպատակն** է կառուցել խաղահրապարակներ համայնքի բոլոր բնակավայրերում:

**Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է** տասը բնակավայրերում ունենալ առնվազն մեկ խաղահրապարակ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքում չկան խաղահրապարակներ, ժամանցի վայրեր, ուստի նպատակահարմար ենք գտնում կառուցել համալիր խաղահրապարակներ՝ և՛ մանուկների, և՛ մեծահասակների համար:

**Ծրագրի անվանումը՝ «Ջրամատակարարում»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06 խումբ 03 դաս 01 ծրագիր 58)

**Ծրագրի իրականացման նպատակն** է բնակչությանը մատակարարել խմելու և ոռոգման որակյալ ջուր, իրականացնել ճիշտ ջրահեռացում, կառուցել խմելու և ոռոգման ջրի նոր ցանցեր:

**Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է** բնակչությանը ապահովել որակյալ խմելու ջրով, իրականացնել ոռոգում առանց ջրի կորստի:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի կողմից հիմնադրված «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի միջոցով: Հիմնարկի գործառույթները, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվել են համայնքի ավագանու կողմից: Ջրամատակարարման, ջրահեռացման, սանմաքրման և աղբահանության աշխատանքները կազմակերպվելու են հիմնարկին պատկանող աղբատար ավտոմեքենաների, աղբահանության ծառայություն իրականացնող կազմակերպությունների և այլ հատուկ տեխնիկաների միջոցով:

**Ծրագրի անվանումը՝ «Փողոցների լուսավորում»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 06 խումբ 04 դաս 01 ծրագիր 60)

**Ծրագրի իրականացման նպատակն** է երեկոյան և գիշերային ժամերին համայնքի բնակավայրերի երթևեկելի և բակային տարածքների լուսավորում, շենքերի և կառույցների գեղարվեստական լուսավորության ապահովում:

**Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է** երեկոյան ժամերին առավել հարմարավետ և անվտանգ դարձնել փողոցային երթևեկությունը, ապահովել շինությունների և կառույցների գեղարվեստական լուսավորումն, առավել գրավիչ դարձնել դրանց տեսքը:

Նշված ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցները ուղղվելու են թվով փողոցային լուսավորության և կառույցների գեղարվեստական լուսավորման լուսակետերի սպասարկմանն ու դրանց շահագործման ընթացքում սպառած էլեկտրաէներգիայի վարձի վճարմանը: Հիշյալ ծրագրով նախատեսվում է նաև ֆինանսավորել ամանորյա գեղարվեստական լուսավորման գոյություն ունեցող համակարգերի վերանորոգման աշխատանքները, ինչի համար անհրաժեշտ ապրանքները և նյութերը ձեռք են բերվելու համայնքի միջոցների հաշվին ըստ թերությունների ակտերով արձանագրված քանակների:

**Ծրագրի անվանումը՝ «Նախադպրոցական կրթություն»**
(Ծրագրի դասիչը Բաժին 09 խումբ 01 դաս 01 ծրագիր 51)

**Ծրագրի իրականացման նպատակն** է համայնքի 1-6 տարեկան երեխաների ցերեկային խնամք մանկապարտեզներում՝ ապահովելով նրանց ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացումը, առողջության ամրապնդումը, ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, ինչպես նաև տարրական դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

**Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է** համայնքի 1-6 տարեկան երեխաների ընդգրկում համայնքում գործող 4 մանկապարտեզներում, երեխա - հաճախումների թվի ավելացում, նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում երեխաների ընդհանուր զարգացման ապահովում:

Ոլորտի համայնքային կազմակերպությունները 4-ն են: Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը կազմում է շուրջ 200 երեխա: Նախատեսված սուբսիդիայի գումարը ներառում է կազմակերպությունների աշխատողների համար նախատեսված աշխատավարձը, ինչպես նաև համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներից, որը կուղղվի զբաղեցրած տարածքի կոմունալ վարձերի վճարման և մանկապարտեզ հաճախող երեխաների սննդի ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը: Ծախսերը պլանավորվել են մանկապարտեզի սաների միջին հաճախելիության սահմաններում:

**Ծրագրի անվանումը՝ «Բարձրագույն մասնագիտական կրթություն»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 09 խումբ 04 դաս 01 ծրագիր 55)

**Ծրագրի իրականացման նպատակն** է համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ուսանող երեխաներին տրամադրել ուսման վճարների փոխհատուցում:

**Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է** բարձրագույն կրթության հնարավորություն համայնքի սոցիալապես անապահով ուսանողներին, ովքեր հետագայում կունենան լավ կրթություն և լավ ապրելու հնարավորություն:

**Ծրագրի անվանումը՝ «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին»**
(Ծրագրի դասիչը՝ Բաժին 10 խումբ 07 դաս 01 ծրագիր 60)

**Ծրագրի իրականացման նպատակն** է Ծաղկահովիտ համայնքի բյուջեի միջոցների հաշվին սոցիալական աջակցության տրամադրում հիվանդներին, հաշմանդամներին, երեխաներին, միայնակ տարեցներին և սոցիալապես անապահով այլ խավերին բժշկական, կենցաղային, տոնական օրերին աջակցություն:

**Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է** հասարակության մեջ սոցիալական շարվածության մեղմում, անապահով ընտանիքների սոցիալական աջակցությանն ուղղված առավել նպատակային և հասցեական հատկացումների կատարում, սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման գործում տեղական ինքնակառավարման մարմինների դերի մեծացում, սոցիալապես անապահով խավերի համար լրացուցիչ սպասարկման և այլ ծառայությունների մատուցման իրականացում:

Միջոցներ են նախատեսվել նաև սոցիալապես անապահով անձանց սոցիալական աջակցության համար: Այդ նպատակով շահառուների ընտրությունը կատարվում է համայնքապետարան ներկայացված դիմումների, բնակավայրեր այցելությունների, բնակչության հետ պարբերաբար շփումների, ընդունելությունների արդյունքում, իսկ շահառուների վերջնական ցուցակը և յուրաքանչյուրին հատկացվող աջակցության չափը որոշվում է այդ նպատակի համար ստեղծված հանձնաժողովի եզրակացության առկայությամբ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2025 թվականի N 76-Ն

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՄԱՐԱՍ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 02-053-0009-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ 0,5 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված «Ամարաս» համահայկական բարեգործական հասարակական կազմակերպության համագործակցության և աջակցության առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված քաղաքացիների համար բնակարաններ և բնակելի տներ կառուցելու համար «Ամարաս» համահայկական բարեգործական հասարակական կազմակերպությանը համայնքային սեփականություն հանդիսացող, Ծաղկահովիտ բնակավայրում գտնվող, 02-053-0009-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքից նվիրաբերել 0,5 հա հողատարածք :

2 . Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությունը ստանալու հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԳՈՌ
ՂԱՋԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ
ՄՀԵՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ**